ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2018 թվականի N 70-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ տրված 2011 թվականի սեպտեմբերի 20-ին, ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Հայկուշ Հովհաննիսյանին, Արսեն Գրիգորյանին, Հայկ Գրիգորյանին և Ժաննա Ղազարյանին պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի 3-րդ փակուղու 11-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0015-0021-ից) 1965 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը՝ 348 քառակուսի մետր և շինությունը՝ 10,6 քառակուսի մետր մակերեսներով, քանի որ.
1) տվյալ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մայիսի 25
գ.Գետամեջ